

# ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Գ Ե Ւ Մ Ա Ն Ի Ա Յ Ի Ց

Բերլին, 1901 թ. կետրուարի 15.

Հառապտմանի նոր դրաման.—Բնակարանների սղութիւնը.—Խա-  
նաց շարժումը:

Երիտասարդ դրամատուրգ Հառապտմանը,—իր տաղանդը բնա-  
րոշող, «Զուլհակեներ», «Սուզուած Զանգը», «Կառապան Հենչել»  
և «Մենակ Մարդիկ» երկերից յետոյ, դրաւել է հաղափակիրը աշ-  
խարհի բուռն համակրանքը: Նրա գրուածքները բարգմանում են  
զանազան լեզուներով, նրա անունը հնչում է բոլոր ցաննե-  
րում \*):

Նրա ամենավերջին դրամայի՝ «Michael Kramer»-ի ամ-  
բողջ ֆարուխն հետեւելու է.

—Գլխաւոր հերոսը—Կրամերը տաղանդաւոր նկարիչ է, որի  
համար գեղարուեսը մի մեծ սրբութիւն է, մի առանձին եղե-  
մական աշխարհ: Մայր բնուրեան ամեն մի գեղանի տեսարանը  
դրաւում է նրա հրապուրանիը: Մի անգամ սացած տպաւորու-  
թիւնը մնում է շատ երկար—մինչեւ որ արտապուի պատառի  
վրայ:

Կրամերի բոլոր աշակերտներն ու ծանօթները յարգում են  
նրան. հասարակութիւնը խոսովանում է նրա տաղանդի մեծու-  
թիւնը: Սակայն այդ բոլորը ոչինչ է նրա համար. նա խոյս է  
տախի առօրեայ շարլօն երեւորքներից, տեղի-անտեղի համակրա-  
կան ցոյցերից:

—Իսկական նկարիչն անապատական է, ասում է Կրամերը,  
նա միայնակ պիտի լինի, որպէս զի հասկանայ գեղարուեսի մըր-  
մունցները: Լաւ ու նշանաւոր զարգանում է միայն առանձ-  
նու թեան մէջ...

\* ) «Ծուրճը» այս համարում տալիս է իր ընթերցողներին «Մենակ  
Մարդիկ» դրամայի թարգմանութիւնը:

Եւ նա նետեռում է այդ գաղափարին. նա մեկուսացած նըկարում է Յիսուսի պատկերը փեկ պասկով եւ ոչ ոքի չե ցոյց տալիս իր վրձինի աշխատութիւնը:

Կրամերի արտաքին ձեւերը կոպիտ են եւ սառը, բայց ոչ ոք չե վիրաւուում նրանից, որովհետեւ զիտեն նրա սրտի անկեղծութիւնն ու բարութիւնը:

Անա այդպիս ժնորհալի նկարիչը կարող էր խաղաղ ու երջանիկ ապրել, եթե չը լիներ մի հատիկ որդու—Արևոլդի կորսարեր կենցաղավարութիւնը:

Երիտասարդ Արևոլդը խիստ պատճուած է բնութիւնից: Նա բնութիւնից սապատաւոր է եւ հակակրելի: Նա վանող տպառութիւն է բողնում ամենին վրայ: Նրանից խոյս են տալիս բոլորը—մանաւանդ կանայք: Բարդական այդպիսի դառն պայմաններում մեծանում է նա եւ նետքինեւ մեծ ժնորհ ցոյց տալիս նկարչութեան մէջ:

—Արևոլդը տաղանդաւոր նկարիչ է լինելու—յանախ ասում է հայրը—Միխայէլ Կրամեր:

Խսկ Արևոլդն ընդհակառակին անուշադիր է բողնում նկարչութիւնը եւ ամբողջապիս նույիւում շուայս կենցաղավարութեան:

Սառնասիր հայրը շարունակ յանդիմանում է նրան. առաջարկում է ուղղուել, բայց դրա համար գարծնական ոչ մի միջոց ձեռն չե առնում:

Մայրական հներոյ հոգատարութիւնն ու երջ (Միխայինայի) խորհուրդներն ել մնում են անհինեւանի:

Արևոլդը ամբողջապիս ընկնում է անբարոյականութեան մէջ: Սախմօսութիւնն ու հարբեցողութիւնը դառնում են նրա համար սովորական բան. նա զիւեր-ցերենկ անց է կացնում գարեջրասեւում, անբարոյական կանանց եւ մարդկանց շրջանում: Նա աշխատում է գեր այդտեղ տանալ իր պահանջների յագուրդը:

Ուրիշ ի՞նչ կարող էր անել... չե որ համապատասխան հասարակութիւնը խոյս է տալիս նրանից:

Նրա ամբողջ հրապուրաներ կենցրնանում է գարեջրատան քերեսօլիկ-կօկէս աղջկայ վրայ:

Սակայն այստեղ էլ Արևոլդն իր տարօխնակ արտաքին ու ներքին յատկութիւններով ծաղր ու ծանակի առարկայ է դառնում: Վերջապիս մի օր նա գարեջրատան հարբած յանախորդների հետ ընդհարումն է ունենում. նա ատրնանակով սպառնում է իրան վիրաւորողներին. վերջիններս ընկնում են յետից: Արևոլդը փախչում է եւ իինասպանութեամբ վերջ է դնում իր դառն կեանքին:

Վերջին—չորրորդ գործողութիւնը Միխայէլ Կրամերի վիւս

ու հառաջանեմի շղբան է կազմում: Այսեղ հայրը մասամբ խոստվանում է իր սխալը, իր սպանութիւնը. նա յայտնում է իր նախկին աշակերտ Լախմանին, որ մահն արդեն մաքրեց որդու վրայ ծանրացած կեանեմի կետը եւ այն:

— Լախման, բացականչում է նա, մայուր մերան Արեօլ-դը, մաքրութիւն է արտայայտում նրա անօնչացած դեմքը. բայց ափսո՞ս եւ հազա՞ր ափսոս. նա իր հետ գերեզման տարաւ մի տաղանդ, նկարչական մի մեծ տաղանդ:

Դրանից յետոյ նա սկսում է իր երկար ու բարակ դատողութիւնները կեանեմի եւ մահուան, գեղարուեսի եւ աստուածութեան մասին:

Զափազանց խոր է լիրիխական են նրա մժերը, բայց բոլորին զուրկ դրամատիկական արժեկից:

Սյո բոլորից յետոյ կարծեմ հասկանալի պիտի լինի, քէ ինչո՞ւ հասարակութիւնը սպանութեամբ ընդունեց իր սիրած նեղինակի վերջին դրաման: Քննադատներից շատերը, տեխնիկայի եւ դրամատիկական գործողութեան բացակայութիւնը խոստվանելով, սկսեցին Դիոգինեսի լայտերով բանասեղծութիւնը ու հոգեբանական խորութիւնը որոնել. սակայն շատերն այդ էլ չը գտան եւ դառն յուսանատութեամբ բացականչեցին՝ «Հառապտմանի ասդը կարծես խոնարհում է»:

Հակայական հայերով առաջադիմում է գերմանական արդիւնագործութիւնը: Վաղուց արդեն նա հարեւան պետութիւնների նախանձի առարկան է դարձել:

Պատճառը հասկանալի է: Անող արդիւնագործութիւնը գրաւում է ժողովրդին դեպի բնականները, կենցրոնները: Այսեղ ազգաբնակութիւնն աւելանում է մեծ արագութեամբ և առաջանում մի շարք տեսական նոր երեւոյքներ, որոնց բւում բնակարանների սղութիւնը առաջին տեղն է բնուում:

Հասարակ աշխատառները իրամբ միջոց չունեն սեպհական բնակարաններ տիներու: Շինում են հարուստները—կապիտալիսները. նրանք տինում են մեծ-մեծ բնակարաններ, որպէս զի հետ կերպով վարձով տան եւ աղքատ բնանիքների հետ հաշիւ չունենան:

Սյոդ իրողութեան պատճառով չհասուները ակամայից խրմեւում են նեղ ու վասառողջ բնակարաններում, իսկ երեմն էլ մնում բաց երկնեմի տակ:

Բոլոր մեծ բնակներում էլ նոյն սարսափելի դրութիւնն է: Ահա այդ անտանելի վիճակն է, որ այժմ զբաղեցնում է գերմանական մամուլն ու հասարակութիւնը: Միմեանց յետեւից լոյտ

են տեսնում այդ հարցին նույրուած գրեթե<sup>\*)</sup> ու յօդուածներ, տեղի են ունենում ժողովներ, խորհրդածութիւններ ու դասախոսութիւններ:

Վերջին օրերս բնակարանների հարցը բննուեց նաև բեկյաստագում: Ընտրուած է մի մասնաժողով՝ այդ անյետաձգելի հարցը մանրամասն հնենդու եւ համապատասխան միջոցներ առաջարկելու համար:

Ժամանակի ընթացքում աւելի ու աւելի սուր կերպարանն է սասնում դասակարգային կորիւր եւ գերմանացի կինը վաղուց արդեն սկսել է գիտակցութեն ու ինքնուրոյն կերպով մասնակցել այդ գործին:

Սժամատառ կանանց թիւր արդեն տասնեակ ու հարիւր հազարների է հասնում: Նրանք ունեն արդեն իրանց սեպհական մամուլը (or. Die Gleichheit), որ միւս արծարծում եւ պատպանում է զուտ կանացի շահերը:

Նրանք ունեն նաև բազմաթիւ ընկերութիւններ, կազմակերպական հիմնարկութիւններ, չափազանց յաճախ գումարում են ժողովներ, կարդում են դասախոսութիւններ ընթացիկ հարցերի մասին: Օրինակ միայն վերջին ամսուայ ընթացքում Բերլինի այլ եւ այլ բաղաբանաւորում, հարիւրառ ունկնդիրների ներկայութեամբ դասախոսութիւններ կարդացին՝ տիկ. Ֆօգել՝ «Կնոջ զարգացումը», որ. Մէ՛՝ «Կանացի աշխատանքը գործարաններում», որ. Ստելբախ՝ «Սպառող ընկերութիւնների նեանակութիւնը», որ. Մէ՛լ՝ «Պրոլետարիատի երեխանները» եւ այլն եւ այլն: Իրեւ մի նմուռ ես առաջ կը բերեմ հրապարակախոս որ. Կլարա Ֆելիխի դասախոսութեան—(Կանայք ի՞նչ են պահանջում հասարակութիւնից)—հակիր բովանդակութիւնը:

Նա նախ եւ առաջ նկարագրեց այն ծանր աշխատանքը, որ կատարում են չխուռ կանայք քէ՛ տանը եւ քէ գործարաններում, ապա յիւեց XIX-րդ դարում կատարուած հսկայական առաջադիմութիւնը, որի արդիւնքներից տաս քիչ օգուտ է սասնում չխուռ դասակարգը. Ելեֆտրականութեան ու տոգու ոյժը հսկայական գործեր են կատարում, բայց դրանից ի՞նչ տահ աշխատառ կանանց: Նրանք սիպուած են ապրել նեղ ու ցուրտ բնակարաններում, իր աղքատիկ նաըր պատրասել նահապէտական ձեւով, իրանց զաւակների դասիարակութիւնը քողմել

<sup>\*)</sup> Աւշադրութեան արժանի են Liebrecht: „Reichshilfe für Errichtung kleiner Wohnungen.“ և Kampffmeyer Poul: „Die Baugenossenschaften im Bahnmeneines nationalen Wohungsreforms“.

բնութեան հաճոյին եւ նոյն խսկ յդի ու կիսահիւանդ ժամանակ կատարել ծանր աշխատանքներ, որոնց արդիւնքը հասարակութիւնն է վայելում:

Ահա նենց այս պատճառով հասարակութիւնը պարտաւոր է՝  
1) սալ բոլոր կանաց հաւասար ընտրողական իրաւունք. 2) տի-  
նել ընդհանուր խոհանոցներ ու նաւարաններ. 3) տինել մանկա-  
վարժանոցներ ու առողջապահիկ բնակարաններ եւ այլն եւ այլն:

Այդ բոլորը նա անելու է ոչ իրեւ բարեգործութիւն,  
այլ իրեւ անմիջական պարտականութիւն։ Աշխատաւոր կանայք  
արդեն հասել են այն գիտակցութեան, որ չեն կարող ընդունել  
կապիտալիզմի շարժած ողորմութիւնը։ Նրանք ուզում են սա-  
նալ իրանց դառն երժինքի արդիւնքը եւ դրա ժամանակն արդեն  
մօս է։

Այդ մի եւ նոյն դասախոսութիւնը կարդացուեց երկու ան-  
գամ, ի հարկէ, զանազան տեղերում, եւ երկու անգամին էլ ներ-  
կայ էին 500—600 եւ առելի ունկնդիրներ, որոնց ստուար մե-  
ծամանութիւնը կանայք էին։

Տեղի ուեցան եւ վիճարանութիւններ, որոնցից երեւում էր  
որ գերմանացի կանայք արդեն ձեռք են բերել կոլտուրական  
զենքներ եւ նրանց շարժումը օրէցօր լուրջ նօանակութիւն է սա-  
նալու։

*Ե. ԹՈՓՉԵՍՆՅ*